

21.08.2020թ.

Հայտարարություն

Արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է արտաքին մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է **արտաքին մրցույթ՝ Արտաքին գործերի նախարարության ներքին աուդիտի բաժնի գլխավոր աուդիտորի (ծածկագիրը՝ 14-30.14-Մ2-1)** քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Արտաքին գործերի նախարարության ներքին աուդիտի բաժնի գլխավոր աուդիտորի (ծածկագիրը՝ 14-30.14-Մ2-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ կից:

https://www.mfa.am/filemanager/haytararutyunner/nergin_audit/pashtoni_andznagir.pdf

Արտաքին գործերի նախարարության ներքին աուդիտի բաժնի գլխավոր աուդիտորի (ծածկագիրը՝ 14-30.14-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Արտաքին գործերի նախարարություն (ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է տեղում),
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի օգոստոսի 21-

ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին:
Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:00-ից 16:30-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի սեպտեմբերի 28-ին՝ ժամը 10:30-ին, Արտաքին գործերի նախարարության վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի սեպտեմբերի 30-ին՝ ժամը 11:00-ին, Արտաքին գործերի նախարարության վարչական շենքում (հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212.309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- **«Քաղաքացիական ծառայության մասին» օրենք.** հոդվածներ՝ 4-7, 9-12, 16-18
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910>

- **«Ներքին առօրիսի մասին» օրենք.** հոդվածներ՝ 2-5, 12
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138980>

- **«Գնումների մասին» օրենք.** հոդվածներ՝ 6, 9, 12, 16, 18, 21, 23, 26, 30, 32, 35, 37, 39, 40
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121796>

- **«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենք.** հոդվածներ՝ 1-3, 5, 9, 13, 17, 20
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138995>

- **«Դիվանագիտական ծառայության մասին» օրենք.** հոդվածներ՝ 4, 5, 7-11, 13-15, 17, 21, 25, 50, 51
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132324>

- **«Հյուպատոսական ծառայության մասին» օրենք.** հոդվածներ՝ 2, 4, 5, 9, 12, 15, 24
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119083>

- «Պետական տուրքի մասին» օրենք. հոդվածներ՝ 15, 35, 36
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144998>

- «Համակարգչային օպերատորություն»: Ուսումնական ձեռնարկ: Անի Թորոսյան:
Կրթության ազգային ինստիտուտ: Երևան 2017: էջեր՝ 11-13, 15-16, 19, 30, 76
հղումը՝ http://goriscollege.com/_ld/1/103_dDN.pdf

- «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն,
Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 70, 71, 74, 94, 99, 173, 221, 224, 227,
245-248, 250, 258
հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները
կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության
կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝
<https://www.gov.am/am/announcements/item/346>/հրապարակված ընդհանրական
կոմպետենցիաներից, մասնավորապես՝

- «Խնդրի լուծում» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

- «Հաշվետվությունների մշակում» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և
լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Արտաքին գործերի
նախարարության անձնակազմի կառավարման վարչություն (հասցե՝ ք. Երևան, Վազգեն
Սարգսյան 3, Կառավարական տուն N 2, հեռախոսահամար՝ 060-620-680, էլեկտրոնային
փոստի հասցեն՝ m.hambardzumyan@mfa.am):